ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳԴԱԿ ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	ԳԴԱԿ	ԳԴԱԿ	Գլխարկ	ԳԴԱԿ ՍՊԸ	Ամենօրյա կիսաբրդյա գլխարկ: Գլխարկը կարվում է 2381 արտիկուլի կամ համանման կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից: Բաղկացած է սև լաքապատ գլխարկահովարից, գլխարկաբոլորքը 2581 ԻԱ արտիկուլի մուգ դեղնականաչավուն գույնի մահուդից, վրան երկու 14մմ մետաղյա ոսկեգույն ՀՀ զինանշանի պատկերով դրոշմված կոճակով ամրացվում է ոսկեգույն մետաղական մանրաթելերից հյուսված զարդապարան /հյուսապարան/: Գլխարկաբոլորքի

						վերևի և գագաթի միացման տեղով անցնում է 2 մմ լայնքով կապույտ մահուդից կանտ, էլեկտրոստվարաթղթե ներդիրով և 3,5 սմ լայնքով արհեստական կաշվե շրջանակով: Ներսից գլխարկահատակի եզրագծով տեղադրվում է համապատասխան չափսի զսպանակատիպ մետաղյա ժապավեն: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասում ամրացվում է ոսկեգույն մեծ գլխարկանշան, դափնեպսակի տեսքով, իսկ գլխարկակատարի վրա Հայաստանի Հանրապետության զինանշանը: Արտադրվում են 54-62 չափսերի: Գլխարկահատակի վրա ներսի կողմից կարվում է կաշվից պիտակ, որի վրա նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և գլխարկի չափսը: Գլխարկագագաթի բարձրությունը գլխարկաբոլորքի վերին եզրից 8,5-9սմ՝ կախված գլխարկի չափսերից: Գլխարկաբոլորքի բարձրությունը 4,8-5,2սմ: Սկսած 53 չափսի գլխարկից, գլխարկահատակի տրամագիծը պետք է լինի 29,5 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր

					չափսին ավելանում է 3մմ: Փաթեթավորումը՝ արկղերով, մեկ արկղի մեջ՝ 20 հատ: Արկղերը՝ պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի կտորի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ՝ ՀՀ-ում հավատարմագրված որևէ կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փորձաքննության դրական արդյունքներից հետո ներկայացնել նմուշ՝ հաստատելու համար համապատասխան ստորաբաժանմանը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГДАК ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					